

Բ Ա Ն Ա Ս Է Ր

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ 1902	Տարեկան՝ 15 ֆր. = 6 ռբլ. = 3 դոլար :	ՅՈՒՆՈՒԱՐ ԹԻԻ 1
-----------------	---	-------------------

ՄԵՐ ՆՈՐ ԾՐԱԳՐԻՆ ԱՌԹԻԻ

«Բանասէր»-ի ընթերցողներուն մեծ մասը փափաք յայտնած էր թերթիս մէջ կարդալ «ազգային, գրական եւ գիտական յօդուածներ եւս», բայց ի բանասիրական յօդուածներէ»։ Իսկ փոքր մաս մ'ալ, որուն յայտնած էինք մեծամասնութեան փափաքը, կը հակառակէր ծրագրի ընդարձակման գաղափարին, «վախնալով որ մեծ տեղ չտրուիր հնախօսական, պատմական, լեզուաբանական եւ քննական ուսումնասիրութեանց, որոնք ազգային պատմութիւնն ու լեզուն նորանոր գիւտերով կը լուսաւորեն, ինչպէս որ Բանասէր իր ծրագրով նոյնը կատարած է մենչեւ հիմա»։ Ուրիշներ ալ կարծեցին թէ «Բանասէր իր ծրագիրը կը փոխէ», եւ կամ «ուրիշ գոյն կստանայ»։

Կարծիքներու ամբողջութիւնը քննելով՝ տեսանք, որ թերթին նախորդ ծրագրին վրայ «ազգային, գրական եւ գիտական յօդուածներ եւս» կարդալ փափաքողները մեծամասնութիւն մը կը կազմեն։ Ուստի՝ ծրագրի ընդարձակման մասին մեր որոշումը տուինք եւ — կը գործադրենք այսօրու ընէ սկսելով։

Այնոնք որոնք հակառակ կարծիք յայտնեցին այս նոր ծրագրի նըկատմամբ, «վախնալով որ մեծ տեղ չտրուիր հնախօսական եւս, ուսումնասիրութեանց», պէտք է գիտնան որ թերթ մը միայն փափագով, պղատնտեսական համակրութիւններով չապրիր, այլ ՎՃԱՐՈՂ բաժանորդ հարկաւ որ է, գրամ պէտք է։ Ուրեմն ստիպուած ենք մեծամասնութեան պահանջին առջեւ տեղի տալ, հակառակ մեր ներքին բռնն իղձերուն եւ կազմած ազգօգուտ ծրագրներուն։ Բայց չկարծուի թէ մեր իղձերուն եւ մեր ծրագրներուն գործադրութիւնը չպիտի ընենք մենք, որչափ ալ տեղի տանք մեծամասնութեան փափոքին։ Այն ժամանակ, մեր ծրագրներուն գործադրութիւնը չկատարելով, աւելորդ տեղը մասնաւոր թերթ մը հրատարակած պիտի լինէինք։ Ո՛չ։ Հակառակ յուսահատական

վայրկեաններու մէջ մեր յայտնած դասն գանդատներու, — որ բնական հետեւանքն է մեր ըրած զոհողութիւններու հանդէպ ցոյց տրուած սառն անտարբերութեան, — մենք աշխարհիս ո՛ր ծայրն ալ գտնուինք, մեր բոլոր իղձերը եւ մեր բոլոր ծրագրները պիտի կատարենք. բայց դանդաղորէն պիտի կատարենք: Կը մտածենք թէ ազգային, գրական եւ գիտական նիւթերով պիտի կարենանք ապրեցնել բանասիրականը:

«Բանասէր»ի մէջ չպիտի տպուին քաղաքական գոյն ունեցող գրութիւններ այն պատճառով, որ մեր թերթը մուտք ունի ամէն երկիր — քիչ կամ շատ քանակութեամբ: Մեր ընթերցողներու մէկ մասին խընդրանքին համաձայն, թերթիս ճակտէն վերցուցած ենք նաեւ «ազգային» վերնագիրը Ժիպայն:

Պէտք կըզգանք շեշտելու թէ «Բանասէր» բնաւ տեղ չպիտի տայ անձնական փցուն խնդիրներու. եւ արդէն մեր բաժանորդներու արդար պահանջն ալ այդ է: Պիտի հետեւինք միշտ այն ուղղութեան, զոր արդէն գծած ենք «Բանասէր»ի Ա. տարւան սկիզբը. — Բանասէրի «ծրագրէն առանց չեղելու, առանց աջ ու ձախ յարձակումներ ընելու եւ վիճաբանութեանց տեղի տալու, խաղաղ կերպով պիտի շարունակենք մեր գործն, անձայն եւ անշշուկ, ազգային գրականութեան գանձանակին մէջ՝ մեր կարողութեան չափով՝ փոքրիկ լուծայ մը ձգելու համար»:

Արդեօք հա՞րկ է կրկնել թէ «Բանասէր»ի մէջ յայտնուած ամէն կարծիքի եւ ամէն հրատարակուած յօդուածի համար պատասխանատու չէ խմբագրութիւնս: Ինչպէս ըսած ենք ուրիշ անգամ, այսօր ալ նոյնը կը շեշտենք «թէ Բանասէրի մէջ իւրաքանչիւր յօդուածագիր իր գրածին միայն պատասխանատուն է» (տե՛ս «Բանասէր» Բ տարի, էջ 34, ծանօթ.): Մենք կուզենք կարծիքի եւ տեսութիւններու ազատութիւնը պահել, այնպէս որ տարբեր ուղղութեան հետեւող բանասէրներ ալ ազատ մուտք կարենան ունենալ մեր թերթին մէջ:

Այստեղ հրապարակով մեր շնորհակալութիւնները կը յայտնենք այն ազնիւ ազգայիններու, որոնք իրենց նիւթական եւ բարոյական աջակցութեամբ սատարեցին «Բանասէր»ի հրատարակութեան եւ սիրալոթար մասնակցեցան «Հայարձան»ի պատրաստութեան համար բացուած հանգանակութեան: Շնորհակալութիւն նաեւ այն պատուական պաշտօնակիցներու, որոնք իրենց բարոյական օժանդակութիւնը նուիրելով քաջալերեցին մեզ:

Չենք ուզեր մոռնալ կատարել հոս մեր ուրիշ մէկ պարտականութիւնը, խորին շնորհակալութիւն յայտնելով «Բանասէր»ի հայ եւ օտար ազգի պատ. աշխատակիցներուն, որոնք իրենց ընտիր յօդուածներով ոչ նուազ նպաստեցին թերթիս վայելած յաջողութեան:

